

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2019թ. փետրվարի 19-ի նիստի

(արձ. N8)

1. ԵԹԿՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 3.7 կետում կատարել ներքոհիշյալ փոփոխությունը.

1. 3-րդ բաժնի 3.7 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3.7«Կրթության մասին», «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների համաձայն, բուհի վճարովի համակարգի ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը՝ ՄՈԳ-ը բակալավրիատում՝ նվազագույնը 3.20, մագիստրատուրայում՝ 3.30 (բացառությամբ սույն կետի «է») ենթակետի, որի դեպքում ՄՈԳ-ը հաշվի չի առնվում և «թ») ենթակետի, որի դեպքում ՄՈԳ-ը թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում սահմանվում է 3,60), և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում սույն կետով ամրագրված կարգավիճակ ունեցող ուսանողներին»:

2. 3-րդ բաժնի 3.7 կետի լ) ենթակետից հետո ավելացնել խ) ենթակետը հետևյալ բովանդակությամբ.

խ) բացառիկ դեպքերում այլ ուսանողների՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում 20-50 տոկոս:

Ուսման վարձի գեղջման տոկոսաչափը հաստատում է բուհի ռեկտորատը՝ Մանդատային հանձնաժողովի կողմից ներկայացված գրավոր հիմնավորման առկայության դեպքում:

1.2 Ուժը կորցրած ճանաչել ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. նոյեմբերի 21-ի նիստի որոշմամբ ԵԹԿՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 3-րդ բաժնի 3.7 կետում կատարված փոփոխությունը:

2. Հաստատել մագիստրոսական թեզերի թեմաների ներքոհիշյալ ցանկն ըստ մասնագիտությունների և ՄԿԾ-ների

021101.00.7 Տեսալսողական արվեստ I կուրս

021101.02.7 Օպերատորություն I կուրս

N	ԱԱՀ	Դաս. մեթոդիկա և պրակտիկայի դեկ.	Մագիստրոսական թեզի դեկ.
1.	Շահբազյան Դիանա Կարենի Արդի օպերատորական դպրոցը (Ինովացիոն միտումներ)	Խաչատրյան Ա.	Գալստյան Ս.

021103.00.7 Կինոարվեստ I կուրս

021103.01.7 Կինոարվեստ I կուրս

1.	Մուրադ Մեղրիկ Հարություն Երաժշտությունը կինոյում	Կեսայան Ա.	Երզինկյան Ա.
2.	Բաղդասարյան Մանե Սամվելի Մոնտաժի այլընտրաքները (Ռեֆոնեն դիստանցիա)	Գրիգորյան Ռ.	Գալստյան Ս.
3.	Բաղդասարյան Վարդան Հմայակի Համակարգչային անիմացիայի առանձնահատկությունները	Մարտիրոսյան Գ.	Զրբաշյան Ն.

021301.00.7 Կերպարվեստ I կուրս

021301.04.7 Թատրոնի, կինոյի և հեռուստատլորտի նկարչություն I կուրս

1.	Մախչիկյան Մարուսյա Գեղամի Բեմական դիմակը թատերական արվեստում (բեմանկարչական հետազոտություն)	Մինասյան Դ.	Բերոյան Ն.
----	---	-------------	------------

021503.00.7 Թատերական արվեստ I կուրս

021503.01.7 Դերասանական արվեստ I կուրս

1.	Մխիթարյան Լիլիթ Դավթի ԵԹԿՊԻ դերասանական արվեստի մասնագիտական արդյունքների ուսումնասիրություն	Մուքիասյան Ա.	Հարությունյան Ա.
2.	Պետրոսյան Ռուզաննա Կարենի Միխայիլ Չեխովի վարժանքները՝ դերասանական կրթության բաղկացուցիչ	Մուքիասյան Ա.	Գևորգյան Վ.
3.	Մխիթարյան Արամ Գևորգի ԲԶ/նպ Վարդան Աճեմյանը թատերական մանկավարժ	Ղազանյան Ե.	Սարգսյան Ն.
4.	Գրիգորյան Վերոնիկա Վլադիմիրի Մեներգ դասընթացի	Գրիգորյան Ռ.	Սարգսյան Ն.

	առանձնահատկությունները		
5.	Աբաջյան Քրիստինե Արամի «Երջանկության աղբանոցը» պիեսի հերոսուհու կերպարի դերասանական մեկնություն	Շահվերդյան Վ.	Գևորգյան Վ.
6.	Մելքոնյան Լուիզա Վալերիկի Երևանի մնջախաղի պետական թատրոնի դիմագիծը	Հեքեքյան Է.	Սարգսյան Ն.

021503.02.7 Ռեժիսուրա I կուրս

N	ԱԱՀ	Դաս. մեթոդիկա և պրակտիկայի դեկ.	Մագիստրոսական թեզի դեկ.
1.	Նալբանդյան Խոսրով Արթուրի ԲԶ Անտոն Զեխովի «Հիվանդասենյակ N 6» պատմվածքի ուսանողական բեմականացումն ու բեմադրությունը	Ծատուրյան Ն.	Օրդոյան Գ.
2.	Մելիքյան Արման Հուսիկի ԲԶ/նպ Ռեժիսորական թատրոնը 20-րդ դարասկզբին	Մաթևոսյան Ս.	Սարգսյան Ն.
3.	Սողոյան Էլմիրա Աբելի Սոս Սարգսյանի անվան Համազգային պետական թատրոնի խաղացանկը	Ղուկասյան Ա.	Հարությունյան Ա.
4.	Մարգարյան Արթուր Արտաշեսի ԲԶ Էտյուդը որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ	Շահվերդյան Վ.	Սարգսյան Ն.

021504.00.7 Պարարվեստի ռեժիսուրա I կուրս

021504.01.7 Պարարվեստի ռեժիսուրա I կուրս

1.	Խուղեղա Գաբրիել Ֆրիդարմենի Մնջախաղի տարբերը պարարվեստում	Կարապետյան Ա.	Հարությունյան Ա.
2.	Մանուկյան Քրիստինե Ավետիքի Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտությամբ ավարտական աշխատանքների ուսումնասիրություն	Գալստյան Վ.	Հարությունյան Ա.
3.	Ավետիսյան Սևակ Գարիկի Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի ընթացիկ խաղացանկը	Դավթյան Ն.	Սարգսյան Ն.

021801.00.7 Արվեստի տեսություն և պատմություն I կուրս

021801.01.7 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում I կուրս

1.	Սաֆարյան Աննա Մանֆրեդի Թվային և ինովացիոն տեխնոլոգիաներն արվեստում	Ղուկասյան Ա.	Հարությունյան Ա.
2.	Պետրոսյան Ելիզավետա Աղասու Մշակութային քաղաքականությունը	Ղուկասյան Ա.	Հարությունյան Ա.

	որպես համակարգող գործոն		
3.	Ռոստոմյան Մայա Վարդանի Համակարգչային բազաների անհրաժեշտությունը երիտասարդ մասնագետների առաջխաղացման գործընթացում	Ղուկասյան Ա.	Հարությունյան Ա.
4.	Երեմյան Անի Բագրատի Ռազմավարական ծրագրերի անհրաժեշտությունը թանգարանային գործում	Ղուկասյան Ա.	Հարությունյան Ա.

021801.04.7 Թատերագիտություն I կուրս

1.	Վարդանյան Ջուլիետտա Արսենի Երևանի թատրոնները և թատերական կյանքը	Հարությունյան Ա.	Հարությունյան Ա.
----	---	------------------	------------------

021801.06.7 Սցենարադրամատուրգիական արվեստ

1.	Ամսեյան Անի Տիգրանի Անդրեյ Զվյագինցևի կինոդրամատուրգիան	Գասպարյան Վ.	Գալստյան Ս.
----	---	--------------	-------------

2.1 Աշխատանքի կատարման ընթացքում թույլատրելի համարել մագիստրոսական թեզի վերնագրում աշխատանքի բովանդակությունից բխող փոփոխություն կատարելու հնարավորությունը,

2.2 հանձնարարել ԱՊՏ ամբիոնի վարիչ Գ. Օրդոյանին առաջիկայում մագիստրոսական թեզերի թեմաները հաստատման ներկայացնելիս, ներկայացնել նաև աշխատանքի համառոտ բովանդակությունը:

3. Արձանագրել, որ Թատրոնի ֆակուլտետի և Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկանների ընտրության նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

3.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

3.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքում Թատրոնի ֆակուլտետի դեկանի պաշտոնում միաձայն ընտրվել է պրոֆեսոր Էլմիաննա Արսյումի Հեքեքյանը,

3.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքում Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնում միաձայն ընտրվել է պրոֆեսոր Աննա Յուրիի Երզինկյանը,

3.4 հիմք ընդունելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, առաջարկել ռեկտորին ԵԹԿՊԻ-ի դեկանի ընտրության կանոնակարգի 31-րդ կետի համաձայն՝

3.4.1 Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր և հրամանագրել Թատրոնի ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ մինչև 5 տարի ժամկետով,

3.4.2 Աննա Յուրիի Երզինկյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր և հրամանագրել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ մինչև 5 տարի ժամկետով:

4. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Նիկոլայ Տիգրանի Դավթյանին ձայների մեծամասնությամբ (23 կողմ, 1 դեմ) շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 «Թատերական արվեստ կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈԿ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

5. ԵԹԿՊԻ-ի Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերում անցկացված աուդիտի եզրակացության և Վանաձորի մասնաճյուղում առկա խնդիրների, ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղերի հետագա գործունեության նպատակահարմարության վերաբերյալ Լ. Արզումանյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,

5.1 ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղում աշխատավարձերի վճարման մասով 5 մլն դրամի չափով առկա պարտքը մաս-մաս մայր բուհի միջոցներով մարելու

նպատակով կազմել ժամանակացույց՝ վերջնաժամկետ սահմանելով ս.թ. մայիս ամիսը:

6. ԵՊՀ 100 ամյակին նիվիրված «Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող միջազգային ուսանողական միջոցառման շրջանակներում կազմակերպվող ստեղծագործական և կատարողական մրցույթներին և գալա համերգին ինստիտուտի ուսանողների մասնակցությունը կազմակերպելու նպատակով, հանձնարարել Թատրոնի ֆակուլտետի դեկան Էլմիաննա Հեքեքյանին, ԿԱ ամբիոնի վարիչ Դավիթ Մինասյանին, ԿՀ ամբիոնի վարիչ Գագիկ Ստեփանյանին և Խորեոգրաֆիայի ամբիոնի վարիչ Աննա Կարապետյանին նախապատրաստել ուսանողներին ներքոհիշյալ անվանակարգերի մրցույթին՝

-Կերպարվեստ, լուսանկարչություն և կիրառական արվեստ

-Ասմունք և թատերական մրցույթ

-Պարային մրցույթ:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան